ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/37, 12.03.2019թ.

Բողոք բերող անձ՝ «ԼԻՆԿ» ՍՊԸ

Պատվիրատու ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողով

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա Ֆինանսական վերլուծական և համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել պատվիրատուին չեղյալ հայտարարել «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու

օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված
Բողոքներ քննող անձին՝
Հասցեն՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Բողոքը ներկայացրած անձ՝
«Լինկ» ՍՊԸ (հասցեն՝ ք. Երևան,
Կոմիտաս պող. 49)
տնօրեն՝ Վահագն Խաչատրյան

ք. Երևան, 12.03.2019թ.

ԲՈՂՈՔ

ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից (հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Մհեր Մկրտչյան փող. 5բ) սույն թվականի մարտի 7-ին հայտարարվել է ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀՇՁԲ-19/6 ծածկագրով մրցույթ՝ Ֆինանսական վերլուծական և համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով:

ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀՇՁԲ-19/6 ծածկագրով մրցույթի պայմանագրի Հավելված N 1-ում ներկայացված Տեխնիկական բնութագրի մեջ Պատվիրատուն նշել է. *«Կատարողն անժամկետ օգտագործման է հանձնում Պատվիրատուին «ՀՇ-Հաշվապահ 7» (հանրային հատված) համակարգ՝ 4 (չորս) աշխատատեղի համար նախատեսված համակարգչային ծրագիրը...»*, սույնով խախտելով ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, այն է. *«Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումը առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք»* բառերը»:

Պատվիրատուն մրցույթը հայտարել է սույն թվականի մարտի 7-ին, ժամը 18-ին: Պարզաբանումների հարցման ժամկետ է սահմանված 07.03.2019թ. 17-ից մինչև 10.03.2019թ. 14-ը: Քանի որ պարզաբանումների հարցման ժամկետը համընկել է տոնական և ոչ աշխատանքային օրերի հետ, ուստի Պատվիրատուից armeps.am կայքով պարզաբանում՝ օրենքի հետ վերը նշված անհամապատասխանության կապակցությամբ, ստանալ չէինք կարող:

Ելնելով վերը շարադրվածից, դիմում ենք ձեզ համաձայն ՀՀ գնումների մասին Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված իրավասությունների շրջանակում պարտավորեցնել Պատվիրատուին հայտարարված ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀՇՁԲ 19/6 ծածկագրով մրցույթի նոր հրավեր հայտարարել, որպեսզի մրցույթին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր կազմակերպությունները հավասար պայմաններով հնարավորություն ունենան մասնակցել մրցույթին:

Կից ներկայացնում ենք.

1. Վ. Խաչատրյանի անձնագրի պատճենը,
2. «Լինկ» ՍՊԸ-ի Պետռեգիստրի վկայականի պատճենը,
3. ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀՇՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի Հավելված N 1-ում ներկայացված Տեխնիկական բնութագրի պատճենը,
4. Լիազորման հանձնարարականի պատճենը:

«Լինկ» ՍՊԸ տնօրեն՝ Վահագն Խաչատրյան

ԿՏ

ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ
ՄՈՒՏՔ N 10471
«12» 03 19 թ.

39 Komitas Ave., Yerevan, 0051, Armenia
Phone: (374 10) 201100
Fax: (374 10) 230510
E-mail: link_support@link.am

0051, ՀՀ, Երևան, Կոմիտասի պող. 49
Հեռ.՝ (374 10) 201100
Ֆաքս՝ (374 10) 230510
E-mail: link_support@link.am

09319 8692

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝
(հասցեն՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1)

Բողոքը ներկայացրած անձ՝ «Լինկ» ՍՊԸ
(հասցեն՝ ք. Երևան, Կոմիտաս պող. 49)
տնօրեն՝ Վահագն Խաչատրյան

ԼՐԱՑՈՒՄ

ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով մրցույթի կապակցությամբ 12.03.2019թ. ներկայացված Բողոքի

«Լինկ» ՍՊԸ կողմից 12.03.2019թ. ներկայացված Բողոքի տեքստի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ կերպ. *«Ելնելով վերը շարադրվածից, դիմում ենք ձեզ ՀՀ գնումների մասին Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1)-ին կետի «բ» ենթակետով սահմանված իրավասությունների շրջանակում պարտավորեցնել Պատվիրատուին չեղյալ հայտարարել ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով մրցույթի ընթացակարգը:»*

«Լինկ» ՍՊԸ տնօրեն _____ /Վահագն Խաչատրյան/

Կ.Տ.

49, Komitas Ave., Yerevan, 0051, Armenia
Phone: (374 10) 201100
Fax: (374 10) 230510
E-mail: link_support@link.am

0051, ՀՀ, Երևան, Կոմիտասի պող. 49
Հեռ.՝ (374 10) 201100
Ֆաքս՝ (374 10) 230510
E-mail: link_support@link.am